ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

գ. Փարաքար **10/09/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Օնիկ Ախվերդյանը, Վալոդյա Գրիգորյանը, Ռուդիկ Ջեյնալյանը, Մարիամ Իսպիրյանը, Դավիթ Մինասյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Լյուդվիգ Գյուլնազարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը

Նիստը վարողը՝ համայնքի ղեկավարը, մինչև նիստը սկսելը ներկայացրեց, որ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու անդամ և լիազորությունները դադարեցրած՝ Լիլիթ Ավագյանի մանդատը «Դավիթ Մինասյան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին՝ Տիգրանուհի Ղազարյանին է տրվել: Նիստին ներկա ավագանու անդամները շնորհավորեցին մանդատ ստացած ավագանու անդամ Տիգրանուհի Ղազարյանին:

Մինչ նիստը սկսելը Էմին Երիցյանը բարձրացրեց հետևյալ հարցերը՝

1. Թե ինչու ավագանու նիստերի հեռարձակման համար համապատասխան տեխնիկա ձեռք չեն բերում:
2. Քանի որ ավագանու նիստերի ներկա են լինում նաև Ապրելու երկիր խմբակցության ավագանու անդամները, նրանք ևս պետք է ընդգրկվեն մշտական հանձնաժողովներում:
3. Բարձրացվեց նաև համայնքի ղեկավարի առաջին տեղակալի, ինչպես նաև համայնքի ղեկավարի տեղակալի նշանակման հարցերը:

Արաքսյա Վարդանյանը ավելացրեց, որ Էմին Երիցյանը և Ռուբիկ Աղեկյանը դուրս են եկել խմբակցությունից և անկախ ավագանի են, դրա հետ կապված պետք է մշտական հանձնաժողովներում ևս փոփոխություններ կատարվեն:

Արաքսյա Վարդանյանը ավելացրեց նաև, որ տեխնիկական սարքավորումների ձեռք բերելուց բացի ավելի կարևոր հարցեր կան:

«Ապրելու երկիր» խմբակցության ավագնու անդամ Հովհաննես Մխիթարյանը առաջարկեց օրակարգից հանել օրակարգում հողամասերի նպատակային նշանակության փոփոխության հարցերը, քանի որ դիմած բնակիչների մի մասի հարցերը չեն ընդգրկվել:

Էմին Երիցյանը առաջարկեց «Ապրելու երկիր» խմբակցության առաջարկը դնել քվեարկության:

Քվեարկությունից հետո նիստին ներկա «Ապրելու երկիր» խմբակցության ավագանու անդամները քվեարկեցին կողմ (7 կողմ՝ Լիանա Գասպարյան, Նելլի Եսայան, Էմմա Թորոսյան, Մանուկ Ղազարյան, Հովհաննես Մխիթարյան, Ավետիս Ֆարֆարյան, Հայկազ Սարգսյան), 7 դեմ քվեարկեցին՝ Արաքսյա Վարդանյանը, Լյուդվիգ Գյուլնազարյանը, Դավիթ Ախտոյանը, Գևորգ Խաչատրյանը, Տիգրանուհի Ղազարյանը, Կարեն Մկրտչյանը, Նեկտար Սարդարյանը, իսկ Էմին Երիցյանը և Ռուբիկ Աղեկյանը ձեռնպահ քվեարկեցին:

Կողմ-7, դեմ-7, ձեռնպահ-2:

Քվեարկությունից հետո Արաքսյա Վարդանյանը առաջարկեց հայտարարել 10 րոպե ընդմիջում, որից հետո նոր շարունակեն նիստը: Նիստին ներկա ավագանու անդամները բոլորը կողմ քվեարկեցին Արաքսյա Վարդանյանի առաջարկին և հայտարարվեց ընդմիջում:

Ընդմիջումից հետո Արաքսյա Վարդանյանը առաջարկեց, որպեսզի նորից քվեարկեն հողամասերի նպատակային նշանակության փոփոխության հարցերը օրակարգից հանելու «Ապրելու երկիր» խմբակցության առաջարկը: Ավետիս Ֆարֆարյանը առաջարկեց, որ չքվեարկեն:

Էմին Երիցյանը ասաց, որ յուրաքանչյուր հարց կարող են ասահմանափակ քվեարկել:

Հողամասերի նպատակային նշանակության փոփոխության հարցերը օրակարգից հանելու հարցը դրվեց քվեարկության, քվեարկությունից հետո «Ապրելու երկիր» խմբակցության ավագանու անդամները կողմ էին որպեսզի օրակարգից հանվեն հարցերը (7 կողմ՝ Լիանա Գասպարյան, Նելլի Եսայան, Էմմա Թորոսյան, Մանուկ Ղազարյան, Հովհաննես Մխիթարյան, Ավետիս Ֆարֆարյան, Հայկազ Սարգսյան), իսկ Արաքսյա Վարդանյանը, Լյուդվիգ Գյուլնազարյանը, Դավիթ Ախտոյանը, Գևորգ Խաչատրյանը, Տիգրանուհի Ղազարյանը, Կարեն Մկրտչյանը, Նեկտար Սարդարյանը և Ռուբիկ Աղեկյանը դեմ էին որպեսզի հանվեն հարցերը, իսկ Էմին Երիցյանը՝ ձեռնպահ:

Կողմ-7, դեմ-8, ձեռնպահ-1:

Էմին Երիցյանը առաջարկեց մշտական հանձնաժողովի նիստ հրավիրել, բոլոր հողամասերի նպատակային նշանակության փոփոխության հարցերը և նմանատիպ

հարցերի դիմումները քննարկեն, տեսնեն այդ դիմումների քանակը և դրանից հետո նոր որոշեն ըստ ցուցակի ներկայացնեն անագանու նիստերին:

Քննարկումներից հետո Լյուդվիգ Գյուլնազարյանը առաջարկեց անցնեն օրակարգի հաստատմանը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Նիստի իրավազորությունն ապահովված է եղել, սակայն նիստի ընթացքում որևէ որոշում չի ընդունվել, քանի որ նիստի օրակարգի՝ 8 կողմ, 7 դեմ և 1 ձեռնպահ քվեարկությամբ այն ընդունված չհամարվեց և չհաստատվեց: Մնացած հարցերի վերաբերյալ որոշումներ ևս չեն ընդունվել:

Ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ

ՌՈՒԲԻԿ ԱՂԵԿՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԵՍԱՅԱՆ

ԷՄԻՆ ԵՐԻՑՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԿԱԶ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՍԱՐԴԱՐՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գայանե Մանուկյանը _____